

105Բ. **Ճանիկ Արամեան** + — Մարտիկոյ մեջ տպարանական իր կարճատև գործունեութիւնը [1852-4] տն՝ս 105Գ բուսնամար (Թուրքիոյ բաժին) :

261. **Մկրտիչ Փորթուգալեան** + — Ծնած է 9 Հոկտ. 1848 ին Պոլիս՝ Եալընդ Պաքալ փողոցը : Հայրն էր սեղանաւոր Ռափայէլ որ իր ժամանակին ուսեալ Հայոցմէ



Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ուսուցիչ-հրապարակագիր եւ ազգ. գործիչ

կը պաշտօնավարէ ֆրնս. գրավաճառ-քրքավաճառ. Բիւռ. Թռուայի քով որուն խանութը Մազաս-ճըլար փողոց կը գտնուէր և որ ֆրանսերէնի ուսուցիչ ալ եղած էր Սամարիա, և Լուսաւոր-եալներու հետ յարաբերութիւն ունենալով՝ հրատարակած էր La Question Arménienne անուն տետրակ մը՝ անձնիւր էջի հանդիպակաց հայերէն բարգմանութիւնն ալ դրուած . (քեւ բարգմա-նիքի անուն նշանակուած չէ, բայց կը կարծուի գործն ըլլալ Մազաստարեան Ռուբէնի) : — Դրա-վաճառութեան գործին ծանօտանալէ վերջ, Փորթուգալեան 1866 ին գրատուն-քրքավաճառանոց մը կը բանայ, Բաբգի Հաշէրէն բերել տալով գրեն. պիտոյքը : Այդ տունին է որ ճ. Արամեանի տպարանէն հրատարակած է **Խալեար խանի Պօրսային վինակը** զրգոյկը զոր «Սարաֆ Ամբակում» ծածկանումը երիտասարդ մը (այժմ քանանայ ի Կովկաս) գրած ու իրեն ծախած էր : Տարիէ մը ձեռնարակ կ'ըլլայ այդ գործէն՝ տարիքին անջախանատութեան և ժառանգական խնդիրներու առիւ յաճախակի դատաւարութեանց հետեւանօք . այնուհետեւ պահ մը կ'աշխա-տի մեծ եղբորը՝ Պետրոսի քով որ Բ. Թռուայի հետ կը գործէր : Կարասկտ Պաղճեան վարժա-պետի (ապա Դ Բարբողիմէոս վրդ.) առաջարկութեամբ կ'սկսի իրրեւ ուսուցիչ պաշտօնավա-րել Եկնի քեօյ՝ Բեզգեանց բնակարանը, յետոյ Թեքզեանի բնակարանէն, Պէշկերաջ՝ Զօպան-եան Յակոբի տունը : Աստիք կ'ըլլան նախաքաղցրն իր ուսուցչական ապարեզին : Յետոյ Յ. Թօգլեանի և Կ. Պարոնեան տապալիչներուն հետ համաձայնելով՝ կը կազմէ Հրատարակչական մը. Մկրտիչ կ'սկսի բարգմանել Ա. Տիւմայի **Տիկին Մօնսօրոն**՝ զոր ընկերները լոյս կ'ընծային պրակ առ պրակ : Բաց աստի, Փորթուգալեան մասնակցած է «Գործասէր անուն» հրատարակչ-ական ընկ.եան , որուն անդամներն էին Ա. Սուրենեան, Յ. Զինճիրճեան, Յ. Թիւլեան, Խ. Թաշճեան, Անդրեաս Փափագեան ևն. և որ 1871 ին Վեգիր խանի իր կեղրոնատեղիէն լոյս ըն-ծալած է քանի մը գիրք (ինչպէս «Բանք հաւատացելոց ուրուք», «Գաղտնի ատեան անկախ դատաւորաց», «Համառօտ դասագիրք Հայոց պատմութեան», «Փող արեւելեան» քերթը) : — Ազգ. պատմութեան ընթերցումը չեղմ փափաք մը ծնցուցած էր Փորթուգալեանի մեջ՝ երբալ Հայաստանը տեսնելու և գաւառի Հայութեան համար աշխատելու, փախա՛ք որ 1869ին կ'իրա-